

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33/1

2 հուլիսի 2013 թ.

Քննարկվեց Ա/Ձ Անժելիկա Դավթյանի 18.05.2013 թ-ի դիմում-գանգատը «ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 07.03.2013 թ-ի թիվ 2208330 արձանագրության և 19.03.2013 թ-ի թիվ 2114720 ստուգման ակտի դեմ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի 27.02.2013 թ-ի թիվ 2208330 հանձնարարագրի Ա/Ձ Անժելիկա Դավթյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 07.03.2013 թ-ի թիվ 2208330 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որում մասնավորապես նշված է.

07.03.2013 թ-ին ժամը 13:00-ին ք.Ստեփանավան, Բաղրամյան 63ա հասցեում գտնվող դեղատնից կատարեցինք հսկիչ գնում՝ 1 հատ «Միգ» դեղահաբ 150 դրամ արժեքով, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ա/Ձ Անժելիկա Դավթյանը վաճառված ապրանքի դիմաց կատարված վճարումը չնուրքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Մեր կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Ժամը 13:11-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց «Հ» հաշվետվություն 5310 դրամ ընդանուր գումարով, որում ներառված չէր հսկիչ գնման գումարը: «Հ» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 150 դրամը, ժամը 13:15-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 13:15-ին նորից դուրս բերվեց «Հ» հաշվետվությունը 150 դրամ գումարով: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ Ա/Ձ Անժելիկա Դավթյանը խախտել է «Կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հիմք ընդունելով վերոգրյալը Վանաձորի ՏՀՏ պետի կողմից 11.03.2013 թ-ին հրապարակվել է թիվ 2114720 հանձնարարագիրը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում կատարելու վերաբերյալ: Արդյունքում 19.03.2013 թ-ին կազմվել է թիվ 2114720 ակտը, որով հիմք ընդունելով հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 07.03.2013 թ-ի թիվ 2208330 արձանագրության տվյալները, կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամի չափով:

Ա/Ձ Անժելիկա Դավթյանի գանգատում մասնավորապես նշված է.

համաձայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի հավելված 2-ի 1.6 կետի՝ «Հսկիչ գնման արդյունքում հանձնարարագրի ներկայացման օրը կազմվում է հարկային մարմնի կողմից սահմանված ձևով արձանագրություն՝ երկու օրինակից: Արձանագրության մեջ նշվում են հանձնարարագրի համարը, ամսաթիվը, արձանագրության կազմման վայրը, հսկիչ գնման իրականացման վայրը, ժամանակը, հսկիչ գնումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) անունը, ազգանունը, պաշտոնը...: Արձանագրությունն ստորագրում են հսկիչ գնում կատարող անձինք և տնտեսվարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառող ... աշխատողը: Արձանագրության երկու օրինակներն արձանագրության կազմման օրը ներկայացվում են տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը ... արձանագրության վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում դրա մասին նշում է կատարում արձանագրությունում՝ արձանագրությանը կից հարկային մարմնի

պաշտոնատար անձին ներկայացնելով իր գրավոր առարկությունները կամ արձանագրությունը ստանալուց հետո իր գրավոր առարկությունները պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է հարկային մարմին...>:

Ուսումնասիրելով ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ թիվ 2208330 արձանագրությունն ինչ խախտումներ ենք տեսնում՝

1. Արձանագրության ամսաթիվը լրացված է՝ <07 մարտ 2013 թ.>:

2. Արձագրության հսկիչ գնման իրականացման ... ժամանակը մասում նշված է՝ <07.03.2013 թ. ժամը՝ 13:00-ին>:

3. Արձանագրության տնտեսվարող սուբյեկտի անունից ապրանքների վաճառողի անունը նշված է՝ <Ա/Ձ Անժեյիկա Դավթյան>:

Արձանագրության հսկիչ գնման արդյունքներ մասում նշվածի վերաբերյալ արդեն իսկ առարկությունները մեր կողմից նշվել են:

Եվ այսպիսով, հարկային մարմինների կողմից խախտվել են օրենքով սահմանված պահանջները, մասնավորապես.

1. Արձանագրությունը կազմվել է 07 մարտի 2013 թ-ին, սակայն այն հանձնվել է Ա/Ձ Անժեյիկա Դավթյանին բավականին ուշ, մոտ մեկ շաբաթ հետո, իսկ օրենքի պահանջն է, այն հանձնել նույն օրը: Սրա մասին վկայում է այն հանգամանքը, որ արձանագրությանը կից մեր կողմից այն ստանալու պահին ներկայացվել են առարկություններ 17 էջից բաղկացած, կազմված 10.03.2013 թ-ին, որոնք անմիջապես կցվել են գործին:

2. Արձանագրության հսկիչ գնման իրականացման ... ժամանակը մասում նշված է՝ <07.03.2013 թ-ի ժամը՝ 13:00-ին>, սակայն ինչպես արդեն իսկ նշվել է, այդ ժամանակ դեղատունը փակվել էր ընդմիջման, այդ մասին վկայում է դեղատան դռան վկա փակցված ցուցանակը: Ի՞նչ իրավունք ունեն հարկային տեսուչները մուտք գործել դեղատուն ոչ աշխատանքային ժամին, եթե նույնիսկ հանձնարարականի վրա է նշված ստուգման ժամկետ 10 աշխատանքային օր: Այստեղից բխում է, որ ոչ աշխատանքային օրերին իրավունք չունեն ստուգում անցկացնելու, իսկ երբ դեղատան վրա նշված է, որ այն փակվում է ընդմիջման, դա նույն ոչ աշխատանքային իրավիճակին է հանգեցնում:

3. Արձանագրությունում տնտեսվարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառողի անունը նշված է՝ <Ա/Ձ Անժեյիկա Դավթյան>, սակայն այդ պահին, երբ գլխացավով մարդուն օգնություն էր ցուցաբերում (այլ ոչ թե վաճառք իրականացնում) աշխատող-դեղագործ Քրիստինա Դավթյանը, Անժեյիկա Դավթյանը, դեղատան վաճառասրահից դուրս պահեստավորում էր դեղերը:

Նմանատիպ բազմաթիվ խախտումներ առկա են նաև 11.03.2013 թ-ի ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի թիվ 2114720 հանձնարարագրի մեջ: Օրինակ՝ հանձնարարագրի ստուգման իրականացման վայր նշված է ք.Ստեփանավան, Նժդեհի փ. այգու մոտ, այսինքն՝ լրիվ ուրիշ հասցե, քան այն, որտեղ իբր հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ կազմվել է թիվ 2208330 արձանագրությունը:

Թիվ 2114720 ակտի նախագծի, որն ի տարբերություն ակտի օրինակի մեր կողմից ստացվել է, մեջ ևս առկա են մի շարք խախտումներ: Օրինակ՝ ստուգվող ժամանակաշրջանի սկիզբ նշված է 30.07.2011 թ-ը, այն պարագայում, երբ հանձնարարագրի վրա այդ ամսաթիվը նշված է որպես ստուգվող ժամանակաշրջանի ավարտ, սակայն իրականում Ա/Ձ Անժեյիկա Դավթյանի մոտ տարբեր տեսակի ստուգումներ տեղի են ունեցել մոտավորապես երկու ամիսը մեկ:

Ամփոփելով վերոգրյալը, նույնիսկ թողնելով մի կողմ մարդկային գործոնը, որ նախատոնական այդ օրով, հղի երիտասարդ աղջկա կողմից հիվանդ տարիքով մարդուն դեղատոնային գործունեության լիցենզիոն պահանջներով սահմանված դեղատուփից մի հատիկ դեղահաբ և մի բաժակ ջուր տրամադրելը՝ լավություն անելը, չենք կարծում, որ կարող է գնահատվել որպես հարկային օրենսդրության խախտում, առավել ևս, որ հարկային մարմինների կողմից այդ հսկիչ գնումը և ստուգումն իրականացվել է մի շարք

խախտումներով, և ամենակարևորը, հարկային մարմինների կողմից այսքան հաճախ ստուգում իրականացնելու հիմքերը նույնիսկ պարզ չեն և առհասարակ չկան:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Անժելիկա Դավթյանը խնդրում է անվավեր ճանաչել Վանաձորի ՏՏՏ թիվ 2208330 արձանագրությունը և դրա հիման վրա կազմված թիվ 2114720 ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Անժելիկա Դավթյանի ներկայացուցչի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում Ա/Ձ Անժելիկա Դավթյանի ներկայացուցիչը նշեց, որ 07.03.2013 թ-ին ժամը 13:00-ի սահմաններում, երբ դեղատան աշխատակիցները պատրաստվում էին դուրս գալ ընդմիջման, ներս է մտել մի տարիքով տղամարդ: Վերջինս գանգատվել է սաստիկ գլխացավից և խնդրել է տրամադրել ցավազրկող դեղ: Ա/Ձ Անժելիկա Դավթյանի ներկայացուցչի պնդմամբ, նմանատիպ դեպքերի համար դեղատանն առկա է հատուկ դեղատուփ, որից անվճար տրամադրվում են դեղամիջոցներ: Դեղատան աշխատակիցը նշված դեղատուփից այցելուին տրամադրել է ցավազրկող դեղահաբ: Սակայն, վերը նկարագրվածը ուսումնասիրությունն իրականացրած անձանց կողմից ներկայացվել է որպես հսկիչ գնման ընթացքում ձեռք բերված դեղահաբի դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստ, ինչն իրականությանը չի համապատասխանում:

Ա/Ձ Անժելիկա Դավթյանի ներկայացուցչի բերված փաստարկների վերաբերյալ հսկիչ գնումն իրականացրած անձինք նշեցին հետևյալը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՏՏ պետի 27.02.2013 թ-ի թիվ 2208330 հանձնարարագրում ընդգրկված Արտակ Կոստանոյանը, նշեց, որ հսկիչ գնումը կատարվել է անձամբ իր կողմից: Մասնավորապես, 07.03.2013 թ-ին ժամը 13:00-ին ներս է մտել դեղատուն և պահանջել է տրամադրել 1 հատ ցավազրկող դեղահաբ: Այցելության պահին Ա/Ձ Անժելիկա Դավթյանը և իր աղջիկը, որը նույնպես դեղատան աշխատակից է, նստած են եղել դրամարկղի մոտ: Ա/Ձ Անժելիկա Դավթյանը, որը նույնիսկ չի վերկացել նստած տեղից, վաճառատեղից (այլ ոչ թե ներկայացուցչի հիշատակած դեղատուփից) տրամադրել է պահանջված դեղահաբը: Գնված դեղահաբի դիմաց գնորդը վճարել է 500 դրամ և ստացել է 350 դրամի մանրը:

Գնորդ՝ Արտակ Կոստանոյանը, դուրս է եկել դեղատնից և դրսում սպասող իր գործընկերներին հայտնել՝ կատարված գնման դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրելու վերաբերյալ: Որից հետո ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՏՏ պետի 27.02.2013 թ-ի թիվ 2208330 հանձնարարագրում ընդգրկված Խաչիկ Պողոսյանը կատարել է ևս մեկ հսկիչ գնում, սակայն այս անգամ ՀԴՄ-ի համապատասխան կտրոնը տրամադրվել է:

Ուսումնասիրությունն իրականացնող անձանց կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Որից հետո և ՀԴՄ-ի միջոցով կատարել են համապատասխան գործողություններ, որոնցով հիմնավորվել է գնված դեղահաբի դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը: Մասնավորապես, ժամը 13:11-ին ՀԴՄ-ից դուրս են բերել <Z> հաշվետվություն 5310 դրամ ընդանուր գումարով, որում հսկիչ գնման գումարը ներառված չի եղել: <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը ժամը 13:15-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 13:15-ին նորից դուրս բերվել <Z> հաշվետվությունը 150 դրամ գումարով:

Քննարկվող դեպքում իրականացված ուսումնասիրությամբ հիմնավորվել է Ա/Ձ Անժելիկա Դավթյանի կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջների խախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից Վանաձորի ՏՏՏ պետի 11.03.2013 թ-ի թիվ 2114720 հանձնարարագրի համաձայն կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում 19.03.2013 թ-ին կազմված թիվ 2114720 ակտով

կիրառվել է <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամի:

Հանձնաժողովի 04.06.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն արձանագրությունը և ստուգման ակտը թողնվել են անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը, դիմում-գանգատը և գանգատին առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

Արձանագրությունը և ստուգման ակտը թողնել է անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ